1705 ին՝ **Ջեռբածութիւն յերկինս** (Բ. տիպ) և **Ժամակարգութիւն** «հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց. Գովեստ բերկրանաց եռանձնեայ դիմաց, բազմանոյլ յօդից, նորին բանակաց». վերջնոյն ծախքը հոգացած է Ջուղայեցի Գօրգսէնց Աղազարի որդի Պրն. Թասայի: Այս «Ժամագիրք»ին Ցիշատակարանին կ'իմացուի թէ «Տեառն Թովմասու եռամեծ Վարդապետի Գործարանում» կային իր «գործակալ»ները՝ Մատթէոս, Ղուկաս, ՍԻՆԱՆ և Միքայէլ: Տպագրութիւնն ընտիր, զարդափակ էջերով և փայտաքանդակ պատկերներով: 1705 ին վերջ սակայն անգործութիւնը կը տիրէ. կ'երևի թէ Թովմաս եպսկ.ի միջոցները սպառած էին: — Իրենք պատուաւոր դիրք մը բռնած էին Եւրոպայի մէջ. Շրէօտէր գերմ. գիտնականը Թովմասէն սորվեցաւ հայերէն. Ղուկաս ծանօթութիւն հաստատեց Լայպնիցի՝ գերմ. նշ. փիլիսոփային հետ որուն ներկայեց իր սրբազան հօրեղբայրն ալ: Նուրիջանեանց պետը բեպետ սկիզբէն մտադրութիւն ունէր իր տպարանը Հայաստան փոխադրելու, բայց հրաժարեցաւ այդ խորհուրդէն, վասնզի հայրենիքը նպաստաւոր չէր իր ծոցին մէջ պահելու և զարգացունելու նմանօրինակ ձեռնարկ մը: Տաժանելի էր ստուգիւ այս պատուական եպիսկոպոսին վիճակը, մէկ կողմէ ալեւորի վատուժման անձնատուր, միւս կողմէ նիւթապէս ընկճուած և հայրենաբաղձութեամբ տուայտագին: Կ'ուզէ վերջ մը տալ իր դժպատեհ նժդեհութեան ու մեկնիլ հայրենիք, անոր սուրբ հողին վրայ կատարելու համար իր երկրաժեշտը. սակայն մեկնումի պատրաստութեանց միջոցին անկողին կ'իյնայ ու քիչ օրէն կը վախճանի:

270. **Ղուկաս Ղամանդեցի** ✦ — Իր կենսագրութիւնը տեսանք Թ. Վանանդեցիի բաժինին մէջ: Անոր մահէն վերջ՝ Ղուկաս մնաց Ամստերտամ ուր Շրէօտէր շարունակեց իրմէ սորվիլ հայերէնը: Թովմաս իր տպարանին բոլոր զոյքերը կտակած էր իր եղբօրորդւոյն որ 1711 ին կը հրատարակէ այդ Գերմանին հայ-լատին **Առաձեան լեզուի գանձը**, միևնոյն տարին՝ Յովհ. Վրդ. Ջուղայեցիի **Համառօտ քերականութիւն եւ տրամաբանութիւն** «որ է քերթութիւն բառի և կրթութիւն բանի»: Ընտիր տպագրութեամբ 78 էջնոց այս Քերականութեան վրայ գործարանի անուն չէ յիշատակուած: — Ղուկաս իր հօրեղբօր մահուամբ որբ մնացած և մանաւանդ զուրկ դրամէ՝ շատ նեղութիւններու կը մատնուի. գործակից կ'ունենայ իր քով գրաշարութիւն ընող Նուրիջանեան Յովհ. պատանին որ կ'օգնէ իրեն: 1713 ին կը հրատարակէ **Հայելի Ամ.ատուչ գրոց հին կտակարանի** (Ջուղայեցի Խաչատուր Պողոսի որդի՝ Պրն. Պետրոսի ծախքով): Այս զիրքին Ցիշատակարանին մէջ Ղուկաս կ'ըսէ իր անձին համար «Ծնունդս Գրիգորեան, սերունդս Վանանդեան, և անձանձիր տքնութեամբ յարմարօղս, յիմում իսկ տպարանի տպօղս այսր նորակերտ բուրաստանիս»: Ամստերտամ հաստատուած վաճառականներու աջակցութեամբ պահ մը իր գոյութիւնը կ'ապահովէ այս գործատունն ուրկէ 1714 ին լոյս կ'ընծայուի 1500 օրինակ **Սաղմոս**՝ Ստեփաննոսի և Մարտիրոսի ծախքով, իսկ 1716 ին **Պատկերաստէր պատկերասեաց** «Սէր է համաձայնութիւն պատկերաց»ը որ գայն դրոշմողին հեղինակութիւնն էր: Յաջորդ տարին դարձեալ հոն կը տպագրուի **Ժամագիրք կարճառօս** գիրքը (վաճառականներու համար) որ վերջինը կ'ըլլայ: Այնուհետև պարտապահանջներ նոյն աշխատանոցը կը գրաւեն և Վանանդեան մեծահամբաւ ընտանիքը կը փճանայ իսկ և իսկ: **12 տարի վերջ Մխիթար Սեբաստացի՝ հայ առեւտրականի մը միջոցաւ Նուրիջանեանց տառերուն մայրերը ծախու կ'առնէ եւ կը փոխադրէ գանգիֆ Վենետիկ**: — Եւ ՀՕԼԱՆԴԱՅԻ մէջ, 1717 ին ի վեր՝ 195 տարի, ո՛չ մէկ Հայու տպարան գոյութիւն կ'ունենայ: